

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

ՀԱՐՏՄԱՆ-ՌՈՒԶԱՄԻ. ԻՐԱՇԻՐԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԾԻԱԾ ԹԻԱ-
ԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ. Դ. ՏԱՐՈՒԱՅ
ԴԱՍԸՆԹԱՑԲ. ՓՈԽԱԴՐԵՑ Յ. ՏԷՐ-ՄԻՐԱՔԵԱՆ
ԹԻՖԼԻՍ 1909.

Ուրախ էի, նկատելով, որ ռուսահայերիս մէջ դպրոցական-
ցանկի ճիւղաւորելու հետ առանձին եռանդով ամեն կողմից
լոյս են ընծայում և դիտութեան դանաղան ճիւղերի վերաբե-
րեալ դասադրքեր, քանի որ առանց դրանց դժուարին էր մա-
նուկներին աւանդել այս կամ այն դիտութիւնը: Եւ առաւել
ուրախութիւն էի զգում, երբ միւսնոյն առարկայի համար մի
քանի դասադիրք էի տեսնում հրատարակի վրայ. այդ նշանա-
կում էր, որ մրցում կայ մէջ տեղ, իսկ ուր մրցում կայ՝ այն-
տեղ նաև յառաջադիմութիւն:

Թուարանութեան տարրական դասադրքերից ինձ ծանօթ
էին Գրուբէի դասադիրքը, Եւտուշևսկու խնդիրների հայ թարգ-
մանութիւնը, չէնչէլի հայերէնը, Սպարապետեանի թուարանա-
կան դասադրքերի շարքը և այլն, իսկ երբ լոյս տեսաւ Յ. Տէր-
Միրաքեանի թուարանութեան նոր դասադիրքը՝ ես շտապեցի
փորձել այդ դրքով թուարանութիւն աւանդել իմ մի աշակեր-
տուհուն, աչքի առաջ ունենալով, որ նախ և առաջ դա, ինչ-
պէս ամենից վերջը հրատարակուածը, զերծ պիտի լինի շատ
թերութիւններից և ապա ինչպէս Տէր-Միրաքեանի աշխա-
տութիւն, որը ռուսահայ 2—3 յայտնի մանկավարժներից միւսն
է համարում, այդ դասադիրքը յայտնի առաւելութիւններ պի-
տի ունենայ իւր նախորդներից: Մանաւանդ որ ինքը պ. Տէր-
Միրաքեանն էլ իւր յառաջարանում ասում է, թէ խրախուսուել է

վերջապէս հին ճանապարհից դուրս գալու և նոր ուղի գտնելուն հետամուտ ուսուցիչներէ հարցասիրութեամբ:

Ձեռք բերի ուրեմն Հարտման-Ռուդամի յօդուածիս ճակատին յիշուած դրբի հայերէն փոխադրութիւնը:

Նախ քան դիրքը աշակերտուհուս ձեռքը տալը, ի հարկէ, նախ ինքս պէտք է ծանօթանալի նրա հետ. ծանօթացայ, դասադիրքը ծալեցի մէկ կողմ դրի և նորից դիմեցի հին դասագրքերի օգնութեան, որովհետև դիրքը հիասթափող տպաւորութիւն գործեց ինձ վրայ:

Կիսամենայի իմ ստացած տպաւորութիւնների վրայ հրաւիրել ընթերցողի ուշադրութիւնը, յուսալով, որ իմ նկատողութիւնները օգտակար կարող են լինել նաև իրան՝ մանկավարժ Տէր-Միքաէլեանին հետադալ իւր աշխատութիւնների համար:

Փոխադրողը դրբի ճակատին դրել է հեղինակի անունը Հարտման Ռուդամի. մինչդեռ իւր յառաջաբանում բողոատուած է, որ բացի այդ հեղինակից՝ հում նիւթեր է հաւաքել դրա համար մի շարք ուրիշ հրատարակութիւններից, և դարձեալ օգտուել է Տանկի Eine Sammlung unt. g. Uebungsaufgaben դասագրքից, Արժեքնկովի և Վիշնևսկու ժողովածուներից, ևն ևն, և վերջապէս խառը խնդիրների հատուածը կաղմել է Գէորդ Ղազարեանը, Այս ամենից յետոյ վերկենալ և դրբի ճակատը զարդարել մի հեղինակի անունով՝ որ զուցէ միայն իւրեան է տուել գործին և հազիւ խնդիրների մի մասը՝ այդ վարմունքը մատեմատիքական է:

Այս հանգամանքը ամենից առաջ բերինք մենք ցոյց տալու համար, որ դիրքը ինչ ճշտութեամբ որ սկսուած է, նոյն ձևով էլ շարունակուած ու վախճան է ստանում:

Ամենից առաջ գիրքը՝ որ բացինք՝ 6-դ ֆօրման գլխի վալը դտանք մէջը, որ դժուարացնում էր գրբի գործածութիւնը:

Նախ մենք կարծեցինք, որ գիրքը միայն անխնամ թղթակաղմուած է և ուրիշ ոչինչ, և սկսեցինք թերթել ու ուսումնասիրել. և ահա մեր առաջ հանդիսացաւ երկրորդ և ամենից էական խոչընդոտը՝ այդ դրբի անտանելի լեզուն, որ շատ անգամ անհնարին էր դարձնում խնդիրների հասկանալը: Եթէ

ուղեկներն հատուածներ բերել իբրեւ լեզուի խրթնութեան ապացոյց՝ գուցէ հարկ լինէր արձակ զրուածքների մեծ մասը արտադրել այստեղ. բայց ընթերցողների լսելիքը խնայելով՝ մենք առաջ կրեբենք մի շարք օրինակներ, որոնք լիովին դադափառ կտան այդ գրքի լեզուի մասին. —

Եր. 49. Տիգրանի նոր զգեստը 27 ը. 60 կ. արժէ։ Այս փողի ³/₄-ը միայն կտորի զինն էր. ուրեմն ձրքան։

Ի՞նչ կնշանակի ուրեմն ձրքան։

Եր. 49. ուրիշ չափով նաւթ պատրաստւած էր 4 լամպ 72 ժամ վառելու համար։ Բայց, եթէ 50 ժամից յետոյ միայն մի լամպը վառ մնաց, մնացած նաւթը սրա համար քանի՞ ժամ կը դիմանար։

Ի՞նչ է ուղում ասել փոխադրողը։

Եր. 61. մի աղջիկ ³⁸/₄ ժամում 126 ⁹/₁₆ դրօս կոճակ համարեց, իւրաքանչիւր բոպէյում միջին թւով ձրքան էր այս։

Ի՞նչն էր որքան։

104. Այս նահանգներից ամեն մէկում իւրաքանչիւր չափահաս տղամարդու միջակ թւով ձրքան հող է ընկնում։

Երևի ուղում է ասել՝ միջին թւով։

114. Ո՞րքան կարող են աղալ 3 նոյնպիսի ջրաղացը 52 օրում։

118. Ո՞րք անարժէ մի արշին մահուղը։

119. Գէորգեան ճեմարանի աշակերտների համար տարւայ սկզբին դնեցին...

123. Բաֆֆին ծնւել է 1835 թ. և մեռաւ 53 տարեկան հասակում։

Նոյն. աղա Մահմէդ խանը աւերելէէր Թիֆլիսը։

Պ. Տէր-Միրաքեանի գրքում հանգուցեալ կաթողիկոսը անուանակոչուել է Խրիմիեան, իսկ այժմեան վեհ. չալրապետը Իզմիրիեան։

125. Աւաղանի երկարութիւնն է 6 սաժ. 5 որաչափ...

5. Քաղաքային պարտէզի երկայնութիւնը 126 ս. է, լայնութիւնը՝ 96 ս. ձրքան է այս պարտէզի շրջագիծը։

Կարելի՞ է այս խնդիրը լուծել, երբ սխալ արտայայտութեամբ աշակերտը չգիտէ թէ ինչ դիրք ունի պարտէզը՝ քառակուսի, թէ ուրոր-մուրոր։

Եր. 6. 1908 թ. Զատիկը ապրիլի 13-ին էր. Համբարձման տօնը Երբ հղած կլինէր (միտդ պահիր, Համբարձումը Զատիկից 40 օր յետոյ է լինում):

Անճիշտ խնդիր. եթէ պ. Տէր-Մլրաքեանի հաշուով սանր խնդիրը լուծէ, պէտք է ապրիլի 13-ի վրայ 40 օր աւելացնէ Համբարձումը մայիսի 23-ին համարէ, մինչդեռ Համբարձումը Զատիկի օրից հաշուելով քառասներորդ օրն է, ուրեմն մայիսի 22-ին էւն. ևն.

Անճիշտ կամ սխալ գործածուած բառեր, կամայ թէ ահամալ անթիւ խայտառակ սխալներ միանգամայն անընթեռնի են դարձնում դասադիրքը. — օերմաչափ (չերմաչափ), միմչև (մինչև), դնեցին (դնեցին), պատրաստ է (պատրաստ է), Թիֆլի (Թիֆլիսի), ջրանքից (ջրանցքից?), աղցած (աղած?), 2 անգամ է ծօծում (ծօծում ?), վայրեկեան (վայրկեան), ևն. ևն.:

Ճամպայ և ճանապարհ,

Մարդարնակութիւն և ազգաբնակութիւն ևն.:

Միևնոյն դասադրքի մէջ Ներսիսեան դպրոցը հիմնուած է 1825 թուին (եր. 123), և բացուած է 1854 (?) նոյեմբերի 21-ին. զոնէ այսքանը պարոնը ճիշտ պիտի գիտենար, իբրև Ներսիսեան դպրոցի ուսուցիչ:

Յետոյ փոխադրողը մի վատ սովորութիւն ունի, որ խընդիրները կապում է մէկը միւսի հետ, այնպէս որ մի շարք խընդիրներ եթէ սկզբից կարդաք հասկանալի են, իսկ եթէ սմեն մէկ պարագրաֆը, առանձին խնդիր լինելով, առանձին էլ վերլուծէք՝ նրանք այն ժամանակ ներկայանում են որպէս մի մի կուրիօզ (եր. 62 ևն.):

Թողնում ենք մանր մունր սխալները և մանաւանդ թուանշանների անհամար սխալները: Մի հետաքրքրական նորութիւն էլ ենք իմանում այս դասադրքից, որ հանգ. Խրիմեան Հայրիկը դեռ ևս բաղմած է Լուսաւորչի գահի վրայ և միայն 1911 թուի մարտի 23-ին է պատրաստուում հրաժեշտ տալ այս աշխարհին: (տես եր. 123 § 393. Երբ վախճանուեց Խրիմեան Հայրիկը, եթէ նա 17 տարի 5 ամիս և 25 օր կաթողիկոսութիւն արաւ, իսկ նա օծուեց 1893 սեպտեմբեր 26-ին + 17 տա-

րի 5 ամիս և 25 օր—մահը ուրեմն պիտի լինի 1911 մարտ 23-ին)։

Պ. Տէր-Միրաքեանը գուցէ մեղ կասէ, թէ նա թուարանութեան դասագիրք է կազմել և ոչ պատմութեան. բայց միթէ մի դիտութիւն աւանդելով՝ ներելի է միւսները ազնատել. և միթէ դիտութիւնները միմեանց պակտսը չպիտի լրացնեն։

Մենք կցանկայինք, որ յայտնի մանկավարժ պ. Տէր-Միրաքեանը մի փոքր աւելի բարեխիղճ վերաբերուէր հետեւեալ դասագրքերը կազմելիս։

ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆ

Լ Ո Ւ Ր Ե Ր

Տաճկահայոց դործերը աւելի քան տարտամ վիճակի մէջ են. «Լուճալ»ի ընթերցողները գիտեն, որ պատրիարք Դուրեան սրբազանը հրաժարուել է իւր պաշտօնից, ժողովրդի մի մասը դո՛ւ նորա բռնած դիրքից՝ ուղերձներ է ուղարկում պատրիարքին, Լրոպական մամուլի մի մասը շատագոյնում է նորա բռնած դիրքը, միւս կողմից ազգի մի մասը դժգոհ է, որ պատրիարքը պաշտօնապէս հրաժարուած է, թէպէտ մասնաւոր կերպով դարձեալ վարում է պաշտօնի անյետաձգելի պարտաւորութիւնները, բայց և այնպէս այդ ձեով նորա յամառումը մի առանձին բարեփոխութիւն առաջ չբերեց Տաճկահայոց դործերի մէջ, բացի այն՝ որ կուսակցութիւնները աւելի լարուեցին, կառավարութիւնը մատ մատի չդրեց Դուրեանի հրաժարման առիթ եղող Ալանայի և ընդհանրապէս Տաճկահայերի տնտեսական վիճակը բարւոքելու։ Բոլոր օգուտը այդ հրաժարականի այն եղաւ, որ մի անգամ էլ Եւրոպայի ուշադրութիւնը դարձաւ Տաճկաստանի դժբաղտ հայերի ու նոցա ա-